



Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի տարեգրության մեջ կան անուններ, որոնք անանց հետք են թողել ոչ միայն բուհի կենսագրության մեջ, այլև գիտության այն ոլորտում, որտեղ աշխատել ու արարել են ի փառս հենց այդ գիտության վերելքի: Այդպիսի մտավորականների գիտական վաստակն ու աշխատանքային կենսագրությունն առավել տեսանելի և ակնառու են դառնում, դժբախտաբար, նրանց երկրային կյանքի ավարտից հետո: Համալսարանի հումանիտար ոլորտի մանկավարժ-գիտնականների յուրօրինակ փաղանգի մեջ անանց անուններ են Արարատ Ղափրյանը, Աշոտ Աբրահամյանը, Վաղարշակ Քոսյանը,

Առաքել Առաքելյանը, Վաչե Պարտիզունին, Սևակ Արզումանյանը և շատ ուրիշներ, որոնց բազմահազար սաները երախտագիտությամբ են հիշում իրենց մեծ ուսուցիչներին և ամեն պահի զգում են նրանց աշինքնող ներկայությունը անգամ տասնամյակներ ի հեռավորությունից:

Այդպիսի զգացում է պատում տողերիս հեղինակին, երբ փորձում եմ արժևորել իմ ուսուցիչներին կեսդարյա հեռավորության բարձունքից ...

Ամենայն հավատամքով կարող եմ ասել, որ մանկավարժական համալսարանի հայագիտական փաղանգի առաջատար գիտնականներից է եղել (և մնում է) պրոֆ. Վաղարշակ Արզումանի Քոսյանը, որ շրջապատից բարձրանում էր իր աշինքնող կերպարով:

Ինչո՞վ էր Վ.Քոսյանը գրավել ժամանակի ուշադրությունը՝ անկախ նույն ժամանակի հավերժական հոսքից:

Երիտասարդությանը հայեցի ոգով ուսուցանելու ռազմավարություն մշակող ու սովորողների կրթական մակարդակի երաշխավոր. այսպիսին էր մանկավարժ ու գիտնական Վաղարշակ Քոսյանը:

Ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության խոր զգացումով լեցուն և աշխատակիցների նկատմամբ խստապահանջ ղեկավար. այսպիսին էր ամբիոնի վարիչ Վաղարշակ Քոսյանը:

Տիտանական աշխատասիրությամբ օժտված գիտնական ու հայրենի դպրության ջահակիր. այսպիսին էր գիտության վաստակավոր գործիչ Վաղարշակ Քոսյանը:

Մարդկային բարձր նկարագրով անհատականություն և գիտելիքների անսպառ շտեմարան, այսպիսին էր մարդ ու դասախոս Վաղարշակ Քոսյանը:

Խստաբարո հայացքով գիտնական ու բազում թեկնածուների գիտական կնքա-հայր. այսպիսին էր գիտության կազմակերպիչ Վաղարշակ Քոսյանը ...

Վաղարշակ Քոսյանն այն գիտնական էր, որ մեծապես նպաստել է հայերենագիտության ամենատարբեր ոլորտների առաջընթացին, պատրաստել է գիտությանը նվիրված երիտասարդ մասնագետներ, որոնք հանրապետության տարբեր բուհերում և գիտական հաստատություններում շարունակում են իրենց ուսուցչի հայրենամուտը

գործը: Նա հմուտ տեսաբան մեթոդիստ էր, որ օգնել է կատարելագործելու բուհական համակարգում հայերենագիտական առարկաների դրվածքը, մանկավարժ, որ կրթել ու դաստիարակել է բազմահազար սաներ, որոնք մանկավարժական գործունեություն են ծավալում Հայաստանում և Սփյուռքի հայալեզու գաղթօջախներում:

Իր հիմնարար աշխատություններով պրոֆ. Քոսյանը նոր խոսք է ասել գիտության, մասնավորապես՝ լեզվաբանության բնագավառում. նա սպառնիչ լուծում է տվել հայագիտության ամենատարբեր ոլորտների կնճռոտ հարցադրումների՝ շարահյուսական իմաստաբանություն, հայոց լեզվի պատմություն, գրաբար, ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, նախադասության ակտուալ անդամատում, նախադասության վերլուծության հարցեր և այլն: Անվանի լեզվաբանը խնդրո առարկա հարցերը քննել է՝ ելակետ ունենալով լեզվական իրողությունների մեկնաբանության համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերը, գործադրելով պատմահամեմատական մեթոդի ներքին և արտաքին մեկնաբանության եղանակները:

Պրոֆ. Քոսյանը կյանքին հրաժեշտ տվեց վաթսույոթ տարեկանում. մի տարիք, որի ընթացքում նա ամբարել էր գիտական անխոնջ որոնումների արդյունքները, մի տարիք, որ մղում է նորանոր որոնումների՝ գիտական անշեղ հանգրվան գտնելու հաստատուն կամքով, և, վերջապես, մի տարիք, որից սպասելիքներ ունեին գիտական հասարակայնությունը, ուսանողությունը, շրջապատը:

Վ. Քոսյանը գիտական աշխարհի մտավ կայացած մտավորականի հաստատուն քայլերով. տակավին երիտասարդ հասակում ձեռնարկեց ընդհանուր լեզվաբանական այնպիսի հիմնահարցի քննություն, ինչպիսին էր հնդեվրոպական արմատների բառական արժեքը հայերենում, որ ներկայացրեց իբրև թեկնածուական ատենախոսություն և 1953թ. ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այս աշխատանքը հիմք է հանդիսացել հայերենի պատմական բառագիտության հետագա ուսումնասիրությունների համար, երբ անհրաժեշտություն է զգացվել կատարելու լեզվի բառային կազմի ծագումնաբանական, ստուգաբանական, իմաստաբանական, բառակազմական և այլ կարգի դասակարգումներ:

Պրոֆ. Քոսյանը հայագիտության մեջ ըստ ամենայնի զբաղվել է շարահյուսական իմաստաբանության հարցերով, այն է՝ բառակապակցությունների ուսմունքի մշակմամբ, որին նվիրել է իր գիտական կենսագրության հիմնական մասը և այն ամբողջացնելով՝ հասցրել է ավարտուն վիճակի:

Բառակապակցությունների ուսմունքն իր արտացոլումն է գտել հունահռոմեական լեզվաբանական ավանդույթներում, եվրոպական լեզվաբանական տարբեր ուսմունքներում, ինչպես նաև՝ ռուսական լեզվաբանական դպրոցներում: Ռուսական իրականության մեջ բառակապակցությունների ուսմունքի մշակողն ու խորացնողը Ֆ.Ֆորտունատովն է, հայ իրականության մեջ դրա պատիվը վաստակել է պրոֆ. Վ. Քոսյանը: Ձեռնարկելով բառակապակցությունների ուսմունքի համալիր ուսումնասիրություն՝ Վ. Քոսյանը նպատակ է ունեցել տալու հայերենի բոլոր գոյավիճակների շարահյուսական կառույցների գիտական նկարագրությունը՝ հենվելով մի կողմից՝ եվրոպական և ռուս լեզվաբանության, մյուս կողմից՝ հայ քերականագիտության նվաճումների վրա: Լեզվաբանի ուշադրության կենտրոնում են գտնվում լեզվի բոլոր գոյավիճակների բա-

ռակապակցությունների բոլոր տիպերը, որոնք, ըստ քննության ժամանակաշրջանների, խարսխվում են բնագրային աղբյուրների վրա:

Իր հետազոտությունները նա կատարել է ինչպես հայերենի զարգացման տարբեր գոյավիճակների լեզվական նյութի համաժամանակյա քննությամբ, այնպես էլ երևույթի տարժամանակյա ուսումնասիրության հայեցակետով:

1968-ին նա ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ հրապարակային պաշտպանության ներակայացնելով բառակապակցությունների ուսմունքը ժամանակակից հայերենի մակարդակում:

Շարունակելով իր հետազոտությունները բառակապակցական իմաստաբանության մարզում՝ արոՖ. Վ. Քոսյանը կատարեց լեզվական այդ իրողության համաժամանակյա քննություն լեզվի զարգացման յուրաքանչյուր առանձին գոյավիճակում՝ հրապարակ իջեցնելով առանձին մենագրություններ, որոնցից յուրաքանչյուրն արժևորվում է իբրև լեզվի տվյալ գոյավիճակի բառակապակցական կաղապարների համակարգային քննության ձեռնարկ:

1975-ին հրապարակ է իջնում «ժամանակակից հայերենի բառակապակցությունները» աշխատությունը, որտեղ հեղինակը համաժամանակյա պլանով քննում է արդի հայերենի շարահյուսական կառույցները՝ հենվելով գեղարվեստական ու հրապարակախոսական գրականության լեզվի վրա: Առաջին անգամ հանգամանորեն քննվում են գոյականական և բայական բառակապակցությունները՝ գերադաս անդամների լրացումներով հանդերձ, դիտարկվում են նաև ածականի, թվականի, դերանվան և մակբայի բառակապակցությունները՝ իրենց հնարավոր լրացումների համատեքստում:

1980-ին լույս է տեսնում «Գրաբարի բառակապակցությունները»․ այստեղ հեղինակը դիտարկում է գրաբարի բառակապակցությունների հնարավոր բոլոր կառուցատիպերը՝ հենվելով 5-12-րդ դարերի մատենագրության և Աստվածաշնչի բնագրային տվյալների վրա, ցույց է տալիս այն բնորոշ գծերը, որոնք հատկանշական են գրաբարի շարահյուսական կառույցներին:

1984-ին լույս է տեսնում «Միջին հայերենի բառակապակցությունները»․ քննության նյութը քաղված է 12-17-րդ դարերի գեղարվեստական, պատմական, բժշկագիտական գրականությունից, հրատարակված ձեռագիր հիշատակարաններից և այլ աղբյուրներից: Համաժամանակյա պլանով բացահայտվել են միջին հայերենին հատուկ բառակապակցական կաղապարները՝ շարահյուսական-իմաստային ամենաբազմազան հարաբերություններով. մեկնաբանել են լեզվական այդ շրջանին յուրահատուկ շարահյուսական կառույցների առանձնահատկությունները:

1986-ին հրապարակ է իջնում «Արևմտահայերենի բառակապակցությունները»։ Այս ուսումնասիրության շրջանակներում հեղինակը, հենվելով 19-20-րդ դարերի արևմտահայ, ինչպես նաև՝ սփյուռքահայ նշանավոր գրողների լեզվական իրողությունների վրա, համաժամանակյա կտրվածքով բացահայտել է նյութական խոսքի մասերի լրացումների շարահյուսական-իմաստային հարաբերությունները, միաժամանակ վեր հանել հայերենի արևմտյան տարբերակի համատիպ կառույցների յուրահատուկ գծերը:

Ինչպես երևում է դիտարկված աշխատանքների համառոտ ուրվագծումից, արոՖ. Վ. Քոսյանը ներկայացնում է ընդհանուր հայերենի բառակապակցությունների իմաստակառուցվածքային յուրահատկությունները՝ կապված լեզվի զարգացման յու-

րաքանջյուր գոյավիճակի հետ: Լեզվական իրողությունները բնութագրելիս հեղինակը բացահայտում է շարահյուսական կառույցների այն բնորոշ գծերը, որոնք վճռական դեր են կատարում լեզվական գոյավիճակների տիպաբանական բնութագրերը որոշարկելու հարցերում:

Այնուհետև պրոֆ. Քոսյանը կատարեց բառակապակցական կաղապարների տարժամանակյա քննություն և, իբրև բառակապակցական իմաստաբանության բնագավառն ամբողջացնող հետազոտություն, հրապարակ իջեցրեց հերթական ուսումնասիրությունը՝ «Բառակապակցական կաղապարների իմաստային զարգացումը հայերենում» (1990): Այս աշխատանքով պրոֆ. Քոսյանը ցույց տվեց լեզվական իրողությունների (շարահյուսական կառույցների) փոփոխությունների վեկտորական ուղղությունները, բացահայտեց տարժամանակյա տեղաշարժերի պատճառակցական կապերն ու արձանագրեց շարահյուսական մակարդակում ընթացող տեղաշարժերի միտումները լեզվի ամբողջ համայնապատկերի ֆոնի վրա:

Հայերենի բառակապակցական իմաստաբանությանը նվիրված ուսումնասիրությունները զուտ լեզվաբանական կամ քերականագիտական բնույթի աշխատանքներ չեն. դրանք կրում են պատմաբանասիրական ընդգծված ուղղվածություն. լեզվական փաստերը մեկնաբանվում են յուրաքանչյուր լեզվափուլի գրական հուշարձանների ընձեռած տվյալների հիման վրա: Պրոֆ. Քոսյանը բառակապակցությունների, նրանց տեսակների, նրանց բաղադրիչների ներքին իմաստային հարաբերությունների, կառույցի շարահյուսական գործառույթների տեսական մեկնաբանությունները խարսխում է բնագրային հավաստի օրինակների վրա՝ դրանով ընդգծելով լեզվի և գրականության անքակտելի կապը՝ անկախ գրական ժանրի տեսակից:

Լինելով լայն մտահորիզոնի տեր գիտնական՝ պրոֆ. Վ.Քոսյանը զբաղվել է նաև հայերենի գիտական քերականության, հայոց լեզվի պատմության, հայոց լեզվի մեթոդիկայի և լեզվաբանական հարակից այլ հարցերով: Պրոֆ. Վ.Քոսյանը՝ իբրև համահեղինակ, Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի և Վ. Առաքելյանի հետ կազմել է «Հայոց լեզու» (I մաս, 1980) և «Հայոց լեզու» (II մաս, 1975) բուհական դասագրքերը: Նա իր ավանդն է բերել արևմտահայերենի բուհական դասագրքի կազմման աշխատանքներին. Ս. Աբրահամյանի և Բ. Վերդյանի հետ հրատարակել է արևմտահայերենի ամփոփ ծեռնարկ՝ «Հայերէն լեզուի դասագիրք» (1966, 1968):

Հայ իրականության մեջ Վ. Քոսյանն այն եզակի մտավորականներից է, որ պրոֆեսորներ Գ. Ջահուկյանի, Էդ. Աղայանի և Է. Աթայանի նման իր ուսումնասիրություններում կիրառեց եվրոպական և ամերիկյան լեզվաբանական ավանդույթներում խոր արմատներ ունեցող կառուցվածքային լեզվաբանության սկզբունքները: Այդ մեթոդաբանությամբ նա գրեց «Նախադասության վերլուծության հարցեր» (1975) աշխատությունը, որը նվիրված է արդի հայերենի շարահյուսական կառույցների վերլուծությանը, մասնավորապես՝ ըստ անմիջական կազմիչների: Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվում նախադասության անդամների արտահայտությանը շարահյուսական ամբողջական կապակցություններով, այն է՝ դերբայական դարձվածով, ածականական, մակբայական կապակցություններով, գոյականական և այլ կարգի կառույցներով. զգալի տեղ է հատկացված տրոհված անդամների հանգամանալից քննությանը:

Վ. Քոսյանը կառուցվածքային լեզվաբանության մեթոդաբանությամբ ցույց տվեց հայերենի նախադասության կառուցատիպերն ըստ աստիճանակազմության և առաջարկեց նախադասության երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան և բազմաստիճան կառուցատիպերն ու մշակեց դրանց վերլուծության սկզբունքները:

1990-ին հրատարակվում է «Նախադասության ակտուալ անդամատուներ ժամանակակից հայերենում» աշխատությունը, որտեղ հեղինակը, հենվելով մի կողմից՝ Պրագայի կառուցվածքաբանական դպրոցի հիմնադիր Մատեզիուսի առաջարկած ակտուալ անդամատման դրույթների, մյուս կողմից՝ ամերիկյան նկարագրական լեզվաբանության ակնառու դեմքի Լ.Բյումֆիլդի դիտարկումների վրա՝ աշխատել է մշակել արդի հայերենի պատմողական պարզ նախադասության տրամաբանական շեշտի դրսևորումների ուսմունքը: Աշխատությունը հենվում է գեղարվեստական գրականությունից վերցրած հարուստ տվյալների վրա:

Վերջին երկու աշխատությունները յուրովի հարստացրին հայ լեզվաբանական միտքը՝ նպաստելով լեզվի կառուցվածքի ու նրա մակարդակային միավորների մեկնաբանման արդիականացմանը՝ եվրոպական և ամերիկյան լեզվաբանական ուսմունքների և տեսությունների չափանիշներով:

Վ.Քոսյան գիտնականի կերպարից անբաժան են գիտության կազմակերպչի նախանձելի ջիղն ու աննկուն եռանդը. 1971-78թթ. նա պաշտոնավարել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում՝ որպես փոխտնօրեն: 1951թ. մինչև իր կյանքի վերջը դասախոսել է Խ.Աբովյանի անվ. մանկավարժական համալսարանում (այն ժամանակ՝ ինստիտուտում)՝ դասավանդելով հայագիտական մի շարք հիմնարար առարկաներ՝ գրաբար, լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, մշակել, վարել է ինքնուրույն դասընթացներ, ինչպիսին է բառակապակցությունների ուսմունքը ժամանակակից հայերենում և այլն, եղել է բանասիրական ֆակուլտետի դեկան, իսկ 1985-1992 թթ. դեկավարել է հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Իր պաշտոնավարման ընթացքում աճեցրել է գիտության բազմաթիվ թեկնածուներ, նրանց կատարած հետազոտական աշխատանքների նկատմամբ եղել է չափազանց բարյացակամ, միաժամանակ խիստ ու անաչառ՝ ի շահ հայրենի գիտության և հոգուտ սկսնակ հետազոտողների: Գիտական դեկավարի խստաշունչ հայացքն ու հոգատար վերաբերմունքն զգացել է տողերիս հեղինակը, երբ ժամանակին պատիվ ուներ լինելու նրա ասպիրանտը, այնուհետև՝ գործընկերը...

Վ.Քոսյանն իր վաստակով մեծերի հետ կարող էր խոսել ինչպես հավասարը հավասարի հետ, սակայն նա համեստ էր պահում իրեն, քանի որ տաղանդից անբաժան է բարոյականությունը: Միաժամանակ շատ ու շատ հարցերում նա առաջինն էր հավասարների մեջ... Կարծես «Հոմերի հետ սեղան է նստել Մեծ Պարնեցին»։ Նրա շրջապատի մտավորականները ժամանակի գիտության ռաիվիրաններն էին՝ Գ.Ջահուկյան, Էդ. Աղայան, Ա.Ղարիբան, Ա.Աբրահամյան, Է.Աթայան, Վ.Առաքելյան և շատ ու շատ ուրիշներ...

Վ.Քոսյանը, ի տարբերություն շատ ու շատ գիտնականների, կյանքի մարդ էր. գիտական հարցերում այդքան լրջմիտ անձնավորությունն աշխարհիկ, կենսուրախ և մարդամոտ բնավորություն ուներ:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2022

Երևի նախախնամությունն էր սահմանել, որ տողերիս հեղինակը շարունակեր նրա գործը՝ մի զգալի ժամանակահատված դեկավարելով Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի աշխատանքները: Մեր պաշտոնավարության ընթացքում կողմնորոշվել ենք մեր Ուսուցչի պատգամներով, նրա ավանդած բարոյական որակներով այնպես, որ ամեն քայլափոխի զգացել ենք անվանի գիտնականի աներևույթ ներկայությունը: Համոզված ենք՝ այդ զգոնացնող ներկայությունը զգում են նրա բազմախազար սաներից շատերը:

Պրոֆ. Քոսյանն իր ձեռով կերտեց հավերժության փառքի բանաձևը՝ Քոսյանական բանաձևը...

Բ.գ.դ. պրոֆեսոր՝ Լալիկ Խաչատրյան: